ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.5-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. մարտի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման նպատակով մրցույթին ներկայացվել է 1 (մեկ) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկով՝

- «Տպարան» ՍՊԸ-ի (24,000,000.0 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Տպարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Կազմակերպությունը հաղթող կճանաչվի և նրա հետ պայմանագիր կկնքվի, եթե՝

3-օրյա ժամկետում խմբագրի և Հանձնաժողովին ներկայացնի խմբագրված ֆինանսական նախահաշիվ, այն է՝ հաշվի առնելով, որ կազմակերպությունը ԱԱՀ վճարող է, ֆինանսական առաջարկի բյուջեում առանձնացնելով ԱԱՀ համար առանձին տող:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպությանը՝

- «Տպարան» ՍՊԸ-ին՝

խմբագրել ֆինանսական առաջարկը՝ բյուջեում առանձնացնելով ԱԱՀ համար առանձին տող:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպությունը՝

- «Տպարան» ՍՊԸ-ն,

Հանձնաժողովի կողմից առաջարկվող շտկումները կատարելուց և շտկված տարբերակները ներկայացնելուց հետո կճանաչվի հաղթող և նրա հետ կկնքվի համապատասխան դրամաշնորհային պայմանագիր:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Շ.Հովսեփյան - _____